ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ

Ի՞ՆՉ Է ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

Գենդերային վերլուծությունը կանանց և տղամարդկանց միջև հնարավոր տարբերությունների մասին ուսումնասիրությունն է՝ ներառյալ նրանց կարիքների, հասարակությունում և ընտանիքներում նրանց դերերի, ռեսուրսների հասանելիության, որոշումների կայացման և քաղաքական, տնտեսական ու սոցիալական գործընթացներին մասնակցության ողջ բազմազանությունը:

Գենդերային վերլուծությունը հիմնված է երեք գլխավոր սկզբունքների վրա.

1 **Համատեքստ – ի՞նչը**
Գենդերային վերլուծությունը պետք է բացահայտի կանանց, տղամարդկանց և այդ կատեգորիաների ենթախմբերի միջև եղած տարբերությունները

2 **Պատճառները – ինչո՞ւ**
Երբ իմանում ենք տղամարդկանց և կանանց միջև տարբերությունների ներկայիս համատեքստը, պետք է բացահայտենք, թե ինչու այդ տարբերությունները գոյություն ունեն: Եթե պատճառները անհայտ են, ապա պետք է հետագա հետազոտություն անցկացնել:

3 **Հետևանքները - և այսպիսո՞վ**
Գենդերային վերլուծությունը պետք է վերլուծի կանանց և տղամարդկանց

Ի՞ՆՉ Է «ԵՄ-Ն ՀԱՆՈՒՆ ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԻՐԱՎԱՀԱՎԱՍԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԸ»

Եվրամիության կողմից ֆինանսավորվող «ԵՄ-Ն հանուն գենդերային իրավահավասարության աջակցության ծառայությունը» պահանջարկաստեղծ աջակցություն է տրամադրում Արևելյան գործընկերության[1] ծրագրի կառավարություններին[2] և ԵՄ պատվիրակություններին՝ տարածված գենդերային խնդիրների վերաբերյալ քաղաքականության մշակման և բարեփոխումների իրականացման հարցերում՝ ապահովելու կանանց և տղամարդկանց համար գործուն արդյունքի մատակարարումը:

ԹԻՐԱԽԱՅԻՆ ԼՍԱՐԱՆԸ

Սույն ամփոփագիրը կարող է գործածել իրավական ակտեր, քաղաքականություններ, ծրագրեր և նախագծեր մշակող ցանկացած անձ (կառավարական հաստատությունների, ԵՄ պատվիրակությունների, քաղաքացիական հասարակության կազմակերպությունների աշխատակիցներ և այլ միջազգային զարգացման գործընկերներ), ում նպատակը Արևելյան գործընկերության երկրների և ոչ միայն այդ երկրների մարդկանց օգտակար լինելն է: Այն կարող է նաև գործածվել այդ երկրների իրավական շրջանակներում, քաղաքականության մշակման և ծրագրերի պատրաստման հարցերում հետազոտություններ անցկացնող և/կամ զեկուցող հետազոտողների, ակադեմիական համայնքի և լրատվամիջոցների կողմից:

[1] Բելառուսում Բարեխփոումների աջակցության ծառայությունը օժանդակում է միայն ԵՄ պատվիրակությանը
[2] Արևելյան գործընկերությունը համատեղ նախաձեռնություն է, որում ներգրավված են ԵՄ-ն, դրա անդամ պետությունները և Արևելաեվրոպական վեց գործընկեր երկրները՝ Ադրբեջան, Բելառուս, Հայաստան, Մոլդովա, Վրաստան, Ուկրաինա

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐ
EUROPEAN UNION FOR ARMENIA

Եվրամիությունը հանուն գենդերային հավասարության բարեփոխումների օգնության պատուհան

NIRAS
իրականացվում է niras-ի կողմից

Սույն հրատարակությունը ֆինասնավորել է Եվրոպական Միությունը: Դրա բովանդակության միակ պատասխանատուն NIRAS-ն է, և պարտադիր չէ, որ այն արտացոլի Եվրոպական Միության տեսակետը:

միջև տարբերությունների հետևանքները: Ինչպե՞ս են այդ տարբերությունները ներազդում կանանց, տղամարդկանց և այդ կատեգորիայիներում եղած ենթախմբերի վրա: Արդյո՞ք դրանք խոչընդոտներ են ստեղծում կանանց համար՝ տղամարդկանց հետ համեմատած, տղաների համար՝ աղջիկների հետ համեմատած, և հակառակը:

Գենդերային վերլուծության նպատակը փաստեր հավաքելն է, ինչը կօգնի և՛ կանանց, և՛ տղամարդկանց ուղղված օրենքների, քաղաքականության և ծրագրերի մշակման հարցում: Որպեսզի այդ շրջանակներն իրենց հիմնական գործառույթները՝ իրենց թիրախային խմբերի կարիքներին ծառայելը իրականացնեն արդյունավետորեն, նրանք պետք է հաշվի առնեն և հասցեագրեն այն տարբերությունները և խոչընդոտները, որոնց առնչվում են կանայք, տղամարդիկ և այդ կատեգորիաներում գտնվող ենթախմբերը: Այդպիսով, օրենքները, քաղաքականությունը, ծրագրերը և նախագծերը դառնում են գենդերազգայուն, կամ, ավելի ճիշտ՝ գենդերափոխակերպվող:

Գենդերափոխակերպվող նշանակում է, որ օրենքները, քաղաքականությունը, ծրագրերը և/կամ նախագծերը հաշվի են առնում կանանց և տղամարդկանց տարբեր խմբերի կարիքները և տեսակետները, ինչպես նաև ճանաչում են գոյություն ունեցող տարբերությունները և խոչընդոտները, որոնց առնչվում են այդ խմբերը:

Գենդերափոխակերպվող լինել նշանակում է փորձել փոփոխել (փոխակերպել) կանանց և տղամարդկանց, տղաների և աղջիկների դերերը և պարտականությունները, որոնք բնորոշ տարբերությունների և խոչընդոտների պատճառ են հանդիսանում: Վերջնանպատակն է հավաստիանալ, որ կանանց և տղամարդկանց ենթախմբերը կարող են հավասարապես նպաստել ցանկացած քաղաքականությանը և գործընթացին և շահել դրանցից:

Գենդերային վերլուծության հիմնական նպատակները հետևյալն են՝

- Բնորոշել կանանց, տղամարդկանց և այդ կատեգորիաների ենթախմբերի համար գոյություն ունեցող տարբերությունները և խոչընդոտները բոլոր բնագավառներում:
- Ուրվագծել այն խոչընդոտները, որոնք թույլ չեն տալիս, որ կանանց և տղամարդկանց տարբեր խմբեր լիարժեքորեն օգտվեն և մասնակցեն քաղաքականությունների մշակման, քաղաքական, տնտեսական և սոցիալական գործընթացներին:
- Բնորոշել կանանց և տղամարդկանց առանձնահատուկ խմբերի՝ քաղաքականություններում և գործընթացներում ներառվելու հնարավորությունները:
- Հավաստիանալ, որ քաղաքականությունները և գործընթացները հավասար հնարավորություններ են ստեղծում կանանց և տղամարդկանց համար՝ իրենց ողջ բազմազանությամբ հանդերձ:
- Գենդերային վերլուծությունը շատ ընդհանրություններ ունի գենդերային ազդեցության գնահատման (ԳԱԳ) հետ, որը գնահատում է ծրագրված ցանկացած գործունեության ազդեցությունը՝ ներառյալ օրենսդրությունը, քաղաքականությունները կամ ծրագրերը՝ կանանց և տղամարդկանց կյանքում բոլոր բնագավառներում և մակարդակներում: Սակայն այդ երկուսը պետք չէ խառնել: Եթե գենդերային վերլուծությունը սովորաբար գնահատում է ներկայիս իրավիճակը, ապա ԳԱԳ-ը փորձում է կանխատեսել գործարկվելիք կամ կիրառվելիք օրենքների, քաղաքականությունների և ծրագրերի հնարավոր ազդեցությունը:

ԻՆՉՈ՞Ւ Է ԿԱՐԵՎՈՐ ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

Գենդերային վերլուծությունը գենդերային իրավահավասարության նախապայմանն է՝ ճանաչված միջազգային օրենսդրական շրջանակների կողմից, ինչպես և մարդու իրավունքների և գենդերային իրավահավասարության միջազգային գործիքակազմը, որին Արևելյան գործընկերության երկրները պարտավորվել են հետևել: Դրանք են.

1. Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին Կոնվենցիան (1979թ.)
2. Պեկինի հռչակագիրը և գործողությունների ծրագիրը (1995թ.)
3. ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի «Կանայք, խաղաղություն և անվտանգություն» N 1325 բանաձևը և ԱԽ լրացուցիչ ինը դրույթները
4. Կայուն զարգացման օրակարգ 2030-ը և դրա Կայուն զարգացման 17 նպատակները

Համաշխարհային մակարդակով ՄԱԿ-ի տարբեր գործակալությունների հրապարակած ձեռնարկներում գենդերային վերլուծության առանձնահատուկ պահանջներ են առաջ քաշված: Օրինակ՝ ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի գենդերային վերլուծություն անցկացնելու իրականացնելու մասին ցուցումները վերաբերում են ՄԱԿ ԶԾ բոլոր ծրագրերին: Դրանք սահմանում են առանձնահատուկ համատեքստներում գենդերային վերլուծություն իրականացնելու պահանջները և խորհուրդները:

Եվրոպական Միությունում (ԵՄ) գենդերային վերլուծության դրույթները նախանշված են ԵՄ Արտաքին հարաբերություններում Գենդերային իրավահավասարության և կանանց զորացման գործողությունների պլան III (GAP III, 2020-2025թթ): Պլան III-ը պահանջում է «անցկացնել և գործածել թարմացրած գենդերային վերլուծական տվյալներ՝ իրազեկելու որոշումների կայացումները՝ հետագա գործողությունների համար» որպես ԵՄ-ի կողմից ֆինանսավորվող արտաքին բոլոր ծրագրերի մշակման համար նվազագույն ստանդարտ: Այն պահանջում է գենդերային վերլուծության գործածություն՝ բնորոշելու գենդերային անհավասարության պարբերական և գենդերային խտրականության պատճառները և դրանց դեմ քայլեր ձեռք առնելու համար:

Արևելյան գործընկերության երկրները նույնպես ունեն գենդերային վերլուծության դրույթներ իրենց օրենսդրական շրջանակներում: Հայաստանը, Ադրբեջանը, Վրաստանը, Մոլդովան և Ուկրաինան ընդունել են գենդերային իրավահավասարության մասին օրենքներ և այլ իրավական ակտեր, որոնք ազգային կառավարություններին պարտավորեցնում են իրականացնել գենդերային վերլուծություններ: Վերջին տասնամյակներում նրանք իրականացրել են գենդերային քաղաքականություններ (գենդերային իրավահավասարության գործողությունների ազգային ծրագրեր)՝ հիմնվելով գենդերային վերլուծությունների եզրակացությունների վրա:

Գենդերային վերլուծության օգուտը հստակ է: Նման վերլուծությունները օգնում են քաղաքականություն մշակողներին հաշվի առնել կանանց և տղամարդկանց կարիքները, շահերը և փորձառությունը քաղաքական, տնտեսական և հասարակական կյանքի բոլոր բնագավառներում քաղաքականությունների և ծրագրերի մշակման, իրականացման, մշտադիտարկման և գնահատման մեջ:

ԻՆՉՊԵ՞Ս ԵՆՔ ԱՆՑԿԱՑՆՈՒՄ ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

Ցանկալի է, որ գենդերային վերլուծությունը իրականացվի որևէ քաղաքականության կամ ծրագրի բնորոշման կամ պլանավորման փուլում, որպեսզի հնարավոր լինի եզրակացություններն ընդգրկել քաղաքականության կամ ծրագրի ձևավորման մեջ:

Սովորաբար գենդերային վերլուծությունը ներառում է հետևյալ քայլերը՝

1 **Քայլ առաջին.** հավաստիանալ, որ գենդերային փորձաքննությունը հասանելի է քաղաքականության/ծրագրի պլանավորման փուլում: Սովորաբար այն ներառում է գենդերային փորձագետներին քաղաքականության կամ ծրագրերի մշակման աշխատանքային խմբերում կամ մարմիններում ներգրավելը: Գենդերային մասնագետները պետք է տեղյակ լինեն կանանց, տղամարդկանց և այդ կատեգորիաներում ներառված ենթախմբերի կարիքներից այն ենթատեքստում, որում որ քաղաքականությունը/ծրագիրը մշակվում է: Նրանք նաև պետք է իմանան և փորձառություն ունենան, թե որքանով են այդ կարիքները հաշվի առնվել նմանատիպ քաղաքականության/ծրագրի մշակման, զարգացման և իրականացման ընթացքում և՛ տեղային, և՛ միջազգային հարթակներում:

2 **Քայլ երկրորդ.** հիմնական սոցիալ-տնտեսական, քաղաքական և հումանիտար սեկտորներում սեռով տարանջատված վիճակագրություն և տվյալների հավաքագրում: Նման վիճակագրություն տարեկան տրամադրում են պետական վիճակագրական մարմինները: Այլ կարևոր աղբյուրներ են առանձնահատուկ գենդերային գնահատումների տվյալները, որ իրականացնում են պետական մարմինները, հասարակական կազմակերպությունները, ակադեմիական և հետազոտական ինստիտուտները և միջազգային զարգացման գործընկերները:

3 **Քայլ երրորդ.** եթե որոշակի բնագավառների վերաբերյալ տեղեկատվություն կամ տվյալներ հասանելի չեն, հնարավորության դեպքում անցկացնել խորհրդատվություն (ֆոկուս խմբեր, հարցազրույցներ կանանց և տղամարդկանց հետ և այլն) և արագ գնահատումներ/հետազոտություններ:

4 **Քայլ չորրորդ.** անցկացնել վերլուծություն՝ կենտրոնանալով հետևյալ բոլոր կամ խնդրի հետ առնչություն ունեցող հարցերի վրա.

Համատեքստ	Տնտեսություն և դերեր	Ռեսուրսներ	Ուժ / իշխանություն	Շահառուներ
Ի՞նչ նորմեր և արժեքներ գոյություն ունեն կանանց և տղամարդկանց դերերի և պարտականությունների հետ կապված: Վերապատրաստման և կրթության ի՞նչ մակարդակներ ունեն կանայք և տղամարդիկ, տղաները և աղջիկները: Կանանց և տղամարդկանց և այդ կատեգորիաների այլ ենթախմբերի համար՝ ռեսուրսների, իշխանության, կրթության, աշխատանքային շուկայի, ծառայությունների և այլնի հասանելության տարբերություններ կամ, թե՞ ոչ: Գենդերային ինչպիսի՞ համոզմունքներ, ընկալումներ և կարծրատիպեր գոյություն ունեն:	Ո՞վ ի՞նչն է վերահսկում: Ո՞ւմ համար ի՞նչն է հասանելի: Կամն արդյոք հավանական տնտեսական տարբերություններ կանանց, տղամարդկանց և այդ կատեգորիաների այլ ենթախմբերի միջև:	Ո՞ւմ համար են ռեսուրսները (օր.՝ ֆինանսական, տեխնոլոգիական, տեղեկատվական, ծառայությունների տարածական և ժամանակային ռեսուրսները և այլն) հասանելի: Ո՞վ է վերահսկում ռեսուրսները: Ո՞վ է շահում ռեսուրսներից: Ո՞ւմ համար են կրթական, տեխնիկական գիտելիքի և/կամ հնարավորությունների արդիականացման հմտությունները հասանելի:	Որոշումների կայացման ինչպիսի՞ գործընթացներ են տեղի ունենում ընտանիքներում, հանրային սեկտորում և կորպորատիվ սեկտորում: Ի՞նչ դեր են կատարում կանայք տնտեսական որոշումների կայացման հարցում: Ինչպե՞ս են կանայք մասնակցում քաղաքական գործընթացներին:	Քաղաքականությունները կամ ծրագրերը ի՞նչ աստիճանի են լուծում/հասցեագրում կանանց և տղամարդկանց ռազմավարական կարիքները: Ո՞րն է գենդերային նկատառումների ազդեցությունը քաղաքականության և ծրագրերի ձևավորման, մշակման և իրականացման վրա:

Գենդերային վերլուծության արդյունքները ամփոփված են եզրակացություններում, որոնք ուրվագծում են հետևյալը.

1. Գենդերային տարբերությունները և անհամամասնությունները կոնկրետ բնագավառում
2. Խոչընդոտները, որոնք թույլ չեն տալիս կանանց, տղամարդկանց և այդ կատեգորիաների ենթախմբերին նպաստել և օգուտ քաղել քաղաքականություններից:

Հաջորդ փուլում այս եզրահանգումները լրացնում են գենդերային մեյնսթրիմինգի առաջարկները, այսինքն՝ տալիս են առանձնահատուկ ռազմավարություններ, քայլեր և միջամտություններ, որոնք օգնում են կամրջել բոնորշված տարբերությունները և հաղթահարել խոչընդոտները:

ԴՐԱԿԱՆ ՕՐԻՆԱԿՆԵՐ

Գենդերային վերլուծությունը ԵՄ-ի կողմից ֆինանսավորվող «ԵՄ-ն հանուն գենդերային իրավահավասարության աջակցության ծառայություն» նախագծի անքակտելի մասն է: Արևելյան գործընկերության երկրներում վերջերս իրականացրած դրական օրինակներից են՝

- 2021 թ-ին Արևելյան գործընեկրության երկրներում ԵՄ պատվիրակության համար Գործողությունների փաստաթղթերի մշակման փուլում անցկացրած գենդերային վերլուծությունը: Գենդերային վերլուծությունը օգնեց բնորոշել առանձնահատուկ խոչընդոտները, որոնց հանդիպում են կանայք և տղամարդիկ տարբեր բնագավառներում, ինչպիսիք են՝
    - Ձեռնարկատերերի շրջանակներում կանանց ցածր ներկայացվածությունը
    - Վճարումների տարբերությունը գենդերային հիմունքներով, խտրականություն կանանց հանդեպ աշխատաշուկայում, կանանց ցածր ներկայացվածությունը լավ վարձատրվող պաշտոններում՝ ներառյալ գիտություն, տեխնոլոգիա, ինժեներիա և մաթեմատիկա և տղամարդկանց ցածր ներկայացվածությունը կրթության, առողջապահության և սոցիալական ծառայությունների հետ առնչվող մասնագիտություններում:
    - Գենդերային կարծրատիպերի և գենդերի հիման վրա բռնության գերակշռումը
    - Կանանց ցածր ներկայացվածությունը կառավարության: քաղաքականությունների մշակման և որոշումների կայացման մեջ:
    - Տղամարդկանց կյանքի ավելի կարճ տևողությունը համեմատած կանանց հետ:
    -
- Ուկրաինայում պատերազմի հետևանքների գենդերային վերլուծությունը: Այն Ուկրաինայի Վերականգնման 2022 ծրագրի համար գործողությունների 24 ոլորտներում գենդերային մեյնսթրիմինգի հանձնարարականներ մշակելու հնարավորություն տվեց, ինչը հավաստիացնում է, որ կանայք և տղամարդիկ իրենց ողջ բազմազանությամբ կմասնակցեն վերականգնման գործընթացին և կշահեն դրանից ամբողջությամբ և հավասարապես: Ծառայության փորձագետները ներգրավված են եղել կանանց և տղամարդկանց համար գոյություն ունեցող առանձնահատուկ խոչընդոտների բնորոշման մեջ. այդպիսիք են՝ որոշումների կայացման, խաղաղության և անվտանգության գործընթացներում, ձեռնարկատիրության և բարձր վճարվող մասնագիտություններում կանանց ցածր ներկայացվածությունը, տղամարդկանց սահմանափակ ներգրավվածությունը երեխաների և ընտանիքի այլ անդամների խնամքում և կանանց և աղջիկներին սպառնացող անվտանգային ռիսկերը զինված հակամարտությունների և տեղահանությունների ժամանակ: Այս խոչընդոտները ներառված են Վերականգնման ծրագրում՝ որպես խնդիրներ, որոնք պետք է լուծել վերականգման գործընթացներում:

ՕԳՏԱԿԱՐ ՀՂՈՒՄՆԵՐ՝

- ԵՄ-ն հանուն գենդերային հավասարության՝ բարեփոխումների աջակցության ծառայության մասին
- Գենդերային հավասարության գրադարան
- EU Neighbours East կայք

Այցելեք Գենդերային հավասարության գրադարան:

© Եվրոպական միություն 2023